



**Արմենպրես**

## **Ցուցահանդես՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրման 20-ամյակին նվիրված**

18:42, 27 Սեպտեմբեր, 2011

**ԵՐԵՎԱՆ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:** Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրման 20-ամյակին նվիրված՝ սեպտեմբերի 28-ին «Փարամազ Ավետիսյան» մասնաշենքում կբացվի գյումրեցի նկարիչներ Յրաչ Վարդանյանի ու Կարեն Ալեքյանի «Ցանկապատներ» նկարների շարքը: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Հայաստանի ամերիկյան համալսարանի հասարակայնության հետ կապերի բաժնից, շարքը ներառում է 15 նկար: Դրանք արվեստասերներին կներկայացվեն առանձնահատուկ եղանակով. փակցված կլինեն ներքեւի հատվածում՝ ցանկապատի տպավորություն թողնելու համար:

Կ. Ալեքյանը «Ցանկապատներ» նկարների շարքը ներկայացնում է իբրեւ հետխորհրդային իրավիճակի վավերագրություն: Ըստ հեղինակի մեկնաբանության՝ այսօր, երբ աշխարհում ամենուրեք վերանում են սահմանները, անցյալից ժառանգված այդ կառույցն ավելի է ընդգծում իր ժամանակավրեպ լինելը: Դիտողին նկարների շարքը մտովի ու զգացականորեն կտեղափոխի ոչ վաղ անցյալ:

Նկարիչ Յրաչ Վարդանյանը ՀԱՀ-ի 20-ամյակին նվիրված ցուցահանդեսին կներկայացնի առանձին 7 նկար, ինչպես նաեւ նկարների ալբոմի տեսքով կցուցադրվեն հեղինակի բոլոր աշխատանքները: Ցուցահանդեսին կհաջորդի համերգ. ելույթ կունենան վոկալիստ Լիլիթ Պիպոյանը, ջութակահար Մանան Գարուկյանը, թավջութակահար Գերոնդի Անտոնյանն ու Նելլի Մանուկյանը (Ֆլեյտա):